

**ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ**

ՀՏԴ 371.314.3

Ա.Թ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ. ՆՐԱ ԴԵՐՆ ՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ներկայացվում են մոդուլային ուսուցման՝ որպես կրթական գործընթացի կարևոր բաղադրիչի դերը, առանձնահատկություններն ու կիրառման դժվարությունները:

Առանցքային բաներ. մոդուլային ուսուցում, ավանդական կրթական համակարգ, մոդուլային փաթեթ, մինի կուրսեր, միկրոկուրսեր, ենթամոդուլներ:

Ներածություն: Դասախոսակենտրոն համակարգից անցումը ուսանողակենտրոն համակարգին պահանջում է ուսուցման կազմակերպման հարցում նոր մոտեցում, այն է՝ կարողություններն արժևորվում և գնահատվում են փնտրելու, գտնելու, մտածելու, ճանաչելու, վարժվելու և ինքնուրույն իրականացնելու չափանիշներով, քանի որ գիտելիքի ծավալի աննախադեպ ընդարձակումն առաջնային է դարձրել սովորողի/անհատի/ կողմից նոր տեղեկույթի՝ սեփական ուժերով հնարավորինս արագ փնտրտուքը, դրա վերլուծությունն ու յուրացումը, որոշումներ կայացնելու կարողությունների ձեռքբերումը: Այս ամենի իրագործմանն է միտված մոդուլային ուսուցումը, երբ մոդուլը նպատակային օղակ է, որում միավորված են ուսումնական նյութի բովանդակությունն ու այն յուրացնելուն օգնող միջոցները, իսկ հիմնական գաղափարը սովորողի ինքնուրույն աշխատանքն է:

Մոդուլ /լատին.՝ modulas-չափ, միջոց/ տերմինը ճանաչելի է մի շարք բնագավառներում. ֆիզիկայում՝ որպես գործակից, մաթեմատիկայում՝ թվի բացարձակ մեծություն, ճարտարապետության և շինարարության մեջ այն պայմանական միավոր է, երաժշտության մեջ մոդուլացումը մի տոնայնությունից անցումն է այլ տոնայնության, իսկ կրթական համակարգում մոդուլը ուսումնական ծրագրի մաս է, որի սահմաններում ուսումնասիրվում են առարկաներ, առարկաների համախումբ կամ կոնկրետ գիտաճյուղեր:

Ժամանակակից մանկավարժության մեջ ուսուցման մոդուլային համակարգը ներկայացնում է նյութի յուրացումն ըստ հաջորդաբար դասավորված փաթեթների /բլոկների/, իսկ գիտելիքի գնահատումը կատարվում է դասապրոցեսում սովորողի ցուցաբերած ակտիվության ու ինքնուրույն աշխատանքի համար կուտակած ռեյթինգային միավորներով:

Ուսուցման մոդուլային ձևի ծագումը: Մոդուլային ուսուցման գաղափարը ձևավորվել է XX դարի 60-ական թվականներին, երբ սկիզբ առան ուսուցման գործընթացի լավարկման ակտիվ որոնումները, որի մասնակիցները փորձում էին իրականացնել տարբեր նպատակներ՝ ա) սովորողին հնարավորություն տալ՝ աշխատելու իրեն հարմար տեմպով, բ) գիտելիքի յուրացման գործընթացում ճշգրտել իր կարողությունները, գ) կառուցել ուսուցման ճկուն համակարգ, դ) մասնագիտական գործունեության մեջ հասնել բարձր մակարդակի և այլն:

Մոդուլային ուսուցման գաղափարի հիմքը կարելի է համարել Ս. Պոստոլայտի առաջարկը՝ ուսուցման նյութի փոքր միավորները համարել ինքնուրույն թեմաներ և ազատ ձևով դրանք ինտեգրել պարապմունքների ծրագրում [1, 2]: Նա այդ միավորներն անվանեց միկրոկուրսեր, ապա՝ մինիկուրսեր, որոնց բովանդակությունն ու ծավալը որոշվում էր դիդակտիկ առաջադրանքներով: Մինիկուրսերն առաջին անգամ ներդրվեցին Պարոյուի համալսարանում 1969 թվականին և արագ տարածում գտան ԱՄՆ քոլեջներում և համալսարաններում:

Նշենք, սակայն, որ մոդուլային ուսուցման խնդիրներով զբաղվող մասնագետները բոլոր հարցերում միակարծիք չէին և այսօր էլ չեն: Այսպես՝ Զ. Ռասսելն իր «Modular instruction (1974թ.)» աշխատության [10] մեջ, ապա՝ նաև Պ. Յուգլիչենեն մոդուլը բնորոշում են որպես «ուսումնական փաթեթ», որում ընդգրկվում է ուսումնական նյութը՝ որպես հայեցակարգային /կոնցեպտուալ/ միավորների խումբ: Ռասսելը գտնում էր, որ դասավանդողն ինքնուրույն կարող է ձևափոխել, տարափոխել մոդուլներն ու ենթամոդուլները՝ դրանք դասավորելով ըստ նպատակադրման և ըստ առաջադրվող խնդիրների՝ հաշվի առնելով իր հնարավորություններն ու սովորողների կարողությունները: Այսինքն՝ մոդուլային ուսուցումը ուսումնական ողջ նյութի բովանդակությունը ոչ մեծ բաժինների՝ իբրև ինքնուրույն թեմաների՝ մոդուլների բաժանումն է, որոնցով և գծվում են ուսումնական նյութի սահմանները [1, 3]:

Ռասսելը կարծում էր, որ կարող են գոյություն ունենալ նաև այլընտրելի մոդուլներ, երբ միևնույն նյութը կարող է ներկայացվել տարբեր մոտեցումներով, ինչն էլ ուսանողին հնարավորություն կտա՝ իրեն հարմար ժամանակում, որոշակի տեմպով, իր անհատական կարողություններին համապատասխան կազմակերպելու ուսուցումը, իսկ բարդ թեմաների դեպքում հնարավոր կլինի անհրաժեշտ անգամներ կրկնելու ուսումնառության գործընթացը՝ նյութն ամբողջապես յուրացնելու համար:

1982թ. ЮНЕСКО-ի կոնֆերանսում մոդուլը ներկայացվում էր իբրև առանձին ուսումնական փաթեթ, որը նախատեսված է անհատի կամ ուսանողների մեծ խմբերի ուսուցման համար՝ յուրաքանչյուրին անհատական մեթոդական մոտեցմամբ:

Մոդուլային ուսուցման վերաբերյալ իրենց առանձնակի կարծիքներն են արտահայտել Բ. և Մ. Գոլդշմիդտները, Պ. Յուցկիչենեն, Ա.Կոնիշևան, Պ. Տրետյակովը և այլք՝ նշելով, որ. ա) մոդուլը տեղեկույթի փաթեթ է, որում ներառված են ուսումնական նյութի տրամաբանորեն ավարտուն միավորները, բ) գործողությունների նպատակային ծրագիր է, գ) ընդգրկում է մեթոդական ցուցումներ՝ ուսումնական նյութի պրոբլեմային և ստեղծագործական մոտեցմամբ [4 - 9]:

Ավանդական և մոդուլային ուսուցման համեմատությունը: Ավանդական և մոդուլային կրթական համակարգերը համեմատելիս կարելի է նկատել առաջինի հետևյալ թերությունները.

- ա) թեմաներն ուսումնասիրվում են համեմատաբար մակերեսայնորեն,
- բ) թեմաների բարդացումն իրականացվում է դասարանից դասարան և ոչ թե թեմայի շրջանակներում,
- գ) գրեթե միշտ անհրաժեշտություն կա դասը սկսելու անցած նյութի կրկնությամբ,
- դ) սովորողը չի մասնակցում ուսումնական պլանի կազմմանը, չի սահմանում թեմային հատկացվող ժամանակը,
- ե) պատրաստի նյութը ներկայացվում է դասավանդողի ընկալման լույսի տակ,
- է) թեմաների գրանցումը մատյանում պետք է համապատասխանի թեմատիկ պլանին, իսկ դրանց տարբերությունները չեն խրախուսվում,
- ը) յուրաքանչյուր թեմայի ուսուցումը խստիվ սահմանափակված է կոնկրետ ժամաքանակով,
- թ) ծրագրային նյութը նախատեսված է միջին մակարդակ ունեցող սովորողի համար:
- Ի հակադրություն ասվածի՝ մոդուլային համակարգն ունի հետևյալ տարբերակիչ առանձնահատկությունները.
- ա) թեմաները քննվում են առավել մանրամասն,
- բ) միևնույն թեմայի շրջանակում նյութի ուսուցումն իրականացվում է պարզից բարդը սկզբունքով,
- գ) նյութի ուսուցմանը հատկացվող ժամանակը կրճատվում է՝ ի հաշիվ կրկնությունների բացառման,
- դ) սովորողն իրավունք ունի ընտրելու առարկաները և դրանք սովորելու միջոցները,
- ե) ուսուցման ընթացքը ճկուն է և հարաշարժ. կարելի է տեղաշարժել մոդուլները, լրացնել կամ փոփոխել՝ կախված ուսուցման ձևից և նպատակներից,
- զ) սովորողն առաջադրանքները կարող է կատարել անհատական տեմպով՝ ընտրելով դրանց կատարման՝ իր համար նախընտրելի հերթականությամբ,

է) առավելագույնս ապահովվում է սովորողին ցուցաբերվող անհատական մոտեցումը, իսկ գնահատման հարցում բացակայում է դասավանդողի սուբյեկտիվ վերաբերմունքը,

ը) սովորողը ձեռք է բերում ինքնակառավարման, ինքնագնահատականի, գործարար հաղորդակցման, համագործակցության, թիմային աշխատանքի կարողություններ [6, 8]:

Մոդուլային ուսուցման առանձնահատկությունները: Այսօր դիտարկված է մոդուլային ուսուցման 2 տարբերակ՝ հետևյալ կառուցվածքներով.

1. Յուրաքանչյուր օր ուսուցանվում է 1 կամ 2 առնչակից առարկա (օրինակ՝ լեզու և գրականություն, պատմություն և գրականություն, երկրաչափություն և հանրահաշիվ)՝ նկատի ունենալով, որ տեղեկության յուրացումն այս դեպքում կատարվում է ավելի արագ, իսկ ուսուցմանը կարելի է հատկացնել մի քանի շաբաթից մինչև կես տարի ժամանակ: Այս տարբերակը հարմար է այն սովորողներին, ովքեր դժվարությամբ են անցում կատարում մի առարկայից մյուսը, և 1-2 դասախոսի հետ առնչվելը նրանց համար ավելի դյուրին է:

2. Միաժամանակ մի քանի առարկա դասավանդվում է զուգահեռ՝ ընդգծելու միջառարկայական կապերը և հնարավոր դարձնելու առարկայի դիտարկումը տարբեր կողմերից, ինչը հարմար է մի առարկայից մյուսն արագ անցում կատարելու կարողությամբ օժտված սովորողներին:

Դասերի նվազագույն տևողությունը 2 ակադեմիական ժամ է (90 րոպե):

Մոդուլային ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ է կառուցել մոդուլային ծրագիր՝ կազմված հետևյալ ենթամոդուլներից՝

- նպատակային մոդուլ (1-2 պարապմունք). դասախոսը ծանոթացնում է սովորողներին թեմայի հիմնական հասկացություններին և գնահատում լսարանի նախնական պատրաստվածության մակարդակը (կատարում է դիագնոստիկա),

- տեղեկատվական-օպերացիոն մոդուլ (3-5 պարապմունք). ներառում է ինքնուրույն և գործնական աշխատանքներ՝ ծանոթանալու և ճանաչելու տեղեկության աղբյուրները, բանավիճելու, քննարկելու և մշակելու նոր նյութը,

- կարգավորող, շտկող մոդուլ (1-2 պարապմունք). իրականացվում է նյութի կրկնություն և ընդհանրացում՝ համապատասխան առաջադրանքների միջոցով, որոնք միտված են ինքնա- և փոխադարձ ստուգմանը, առաջացած խնդիրների բացահայտմանն ու դրանց վերացմանը,

- ստուգողական մոդուլ (1-2 պարապմունք). ամբողջական թեմայի ստուգում թեստի կամ ստուգարքի ձևով [6]:

Այս ամենը կարող է իրագործվել՝ ղեկավարվելով հետևյալ չափանիշներով՝

- նյութի բովանդակության ստորին սահմանը պարտադիր գիտելիքն է, իսկ առավելագույն սահման կարող է և չլինել՝ պայմանավորված սովորողի հետաքրքրություններով,

- սովորողի գործունեությունը կառուցվում է գիտելիքի յուրացման փուլերի տրամաբանությամբ՝ գիտելիք, ընկալում, ըմբռնում, մտապահում, կիրառում, վերլուծություն, ընդհանրացում, գնահատում (Բլումի տաքսոնոմետրիա),

- այլընտրական մոդուլների առկայության պարագայում դրանց ազատ ընտրությունը հնարավորություն է ընձեռում՝ յուրացնելու նյութը անհատական, սովորողին հարմար տեմպով,

- առաջադրանքների դժվարությունը պետք է լինի սովորողի ուժերին, նրա գիտելիքի մակարդակին, հակումներին, երբեմն՝ նաև ցանկություններին համապատասխան (մատչելի ուսուցում),

- նյութերն ու առաջադրանքները պետք է կառուցվեն պրոբլեմային ուսուցման հիմքով [9]:

Հավելենք նաև, որ բոլոր փուլերում կան միջանկյալ հնքնաստուգումներ, փոխադարձ հսկում կամ աշխատանքի համեմատում օրինակի հետ: Դա օգնում է գնահատականի նկատմամբ վախի հաղթահարմանը: Միևնույն դասի ընթացքում սովորողը գործունեության յուրաքանչյուր փուլի համար կարող է ստանալ մի քանի գնահատական: Միջանկյալ գնահատականները դրվում են միայն տետրում, իսկ վերջնական միավորը (բոլոր գնահատականների միջին թվաբանականը)՝ մատյանում:

Ստուգման և գնահատման փուլերը: Գնահատման ձևն ըստ նպատակի՝ կարող է լինել.

- **հայտորոշիչ**, որը նախնական գնահատում է՝ պարզելու նախորդ մոդուլներից մնացորդային գիտելիքները, հմտությունները, կարողությունները, բացահայտելու սովորողների ուժեղ և թույլ կողմերը: Հերթական թեման սկսելուց առաջ ևս կարելի է իրականացնել հայտորոշիչ գնահատում.

- **ձևավորող** գնահատում, որը գնահատման շարունակական, գործընթաց է՝ նպատակաուղղված թեմաների յուրացմանը և կարողությունների մակարդակի բարձրացմանը: Այն հայտնի է նաև «ուսուցանող գնահատում» անվամբ.

- **ամփոփիչ** գնահատում. մոդուլը ներառում է նաև միջանկյալ, ապա՝ ամփոփիչ գնահատում՝ վերջնարդյունքում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների ստուգման նպատակով:

Ինքնագնահատման համար առաջարկվում է օգտվել հետևյալ կամ նման հարցադրումներից ու դրանց հատկացվող միավորներից.

1. Ինչպե՞ս եմ յուրացրել նյութը. ա) ամբողջությամբ (9-10 միավոր), բ) մասնակիորեն (7-8 միավոր), գ) քիչ բան եմ հասկացել (4-6 միավոր):

2. Ինչպե՞ս եմ աշխատել. աշխատանքս բավարար է արդյոք.

ա) առաջադրանքները կատարել եմ ինքնուրույն (9-10 միավոր), բ) թույլ եմ տվել սխալներ (7-8 միավոր):

3. Ինչպե՞ս է աշխատել խումբը (զույգը). ա) համերաշխ, միասնական քննարկվել են առաջադրանքները (9-10 միավոր), բ) ոչ բոլորն էին ակտիվ (7-8 միավոր), գ) աշխատանքը ձանձրալի էր, անհետաքրքիր, թույլ են տրվել բազմաթիվ սխալներ (4-6 միավոր):

Ենթադրվում է, որ սովորողներն աստիճանաբար հարմարվում են մոդուլային հնարքներին և հայտնում օբյեկտիվ կարծիք իրենց և ընկերների կատարած աշխատանքի վերաբերյալ:

Մոդուլի կառուցման առանձնահատկությունները: Ուսումնական մոդուլի կազմման շրջանակն այսպիսին է.

ա) մոդուլի կարճ, ճշգրիտ, հասկանալի անվանումը. դժվարություն դեպքում թույլատրվում են ենթավերնագրեր.

բ) մոդուլի նպատակը.

գ) մոդուլի բովանդակության կարճ ռեզյումեն՝ գրված էվրիստիկային հատուկ բանալիներով. օրինակ. «Այս մոդուլում դուք ծանոթանալու եք –ին, նպատակով», «Հարցերի պատասխանները կարող եք գտնել էջերում», «Ինքնակառավարման հարցերը կօգնեն՝ ստուգելու ձեր գիտելիքի որակն ու մակարդակը».

դ) մոդուլի պլան. կազմվում է 3-8 կետի սահմաններում՝ համառոտ մեկնաբանություններով.

ե) նյութի՝ պարզ, հասկանալի լեզվով շարադրանքի ոչ մեծ չափաբաժիններ (1-3 էջի սահմաններում՝ առանց լրացուցիչ մեկնաբանության),

զ) մոդուլի յուրաքանչյուր բաժնին կցված են թեստային, ինչպես նաև գիտելիքի և հմտությունների ստուգման այլ բնույթի առաջադրանքներ,

է) մոդուլային ամբողջ նյութն ընդգրկող թեստային ստուգողական առաջադրանք:

Մոդուլային ուսուցման դժվարությունները: ՀԱՊՀ Քոլեջի «Գործավարություն» մասնագիտության պիլոտային ծրագիրն իրականացվում էր մոդուլային ուսուցմամբ: Մեր փորձի և մոդուլային համակարգի՝ այլոց կողմից կրթական տարբեր մակարդակներում առայժմ մասնակի ներմուծման արդյունքում նկատվել են ուսուցման որոշակի դժվարություններ.

- այն չի համապատասխանում տարրական կրթության շրջափուլին, քանի որ այդ տարիքում դեռևս չեն ձևավորվել ինքնակրթության գաղափարն ու կարողությունները,

- սովորողից պահանջվում է հարմարվողականություն, իսկ ինքնուրույն աշխատանքի նման բարձր մակարդակին արագ հարմարվելը հեշտ չէ,

- սովորողը պետք է ունենա ինքնակարգապահություն, կատարի մեծ ծավալի աշխատանք, իր ուսման համար կրի պատասխանատվություն,

- դասավանդողից պահանջվում է բարձր արհեստավարժություն, դասին մանրակրկիտ նախապատրաստում (յուրաքանչյուր մոդուլի իրականացման համար հանձնարարվող նյութերի հանգամանակից մշակում), ինչը խիստ աշխատատար է, ժամանակատար և ծախսատար (նյութերը պատճենելու իմաստով),

- դասավանդողը դժվարությամբ է հրաժարվում իր համար սովորական դարձած գործողություններից ու մտածելակերպից, ուսուցման ընթացքում իր գերակա դերից՝ դառնալով տեղեկատվական դաշտում սովորողին օգնող, նրա կողքից քայլող, ուղղորդող անձ,

- ուսումնական հիմնարկի՝ նյութատեխնիկական միջոցներով ապահովվածությունը:

Մասնագիտական հմտություններից զատ՝ մոդուլային ուսուցումն ունի նաև գրավոր և բանավոր հաղորդակցության, թիմային աշխատանքի, ժամանակի կառավարման, ինքնուրույն սովորելու, որոշումներ կայացնելու և այլ ընդհանուր հմտությունների զարգացման գործառույթ:

Եզրակացություն: Ուսուցման մոդուլային եղանակը՝ իր առավելություններով և թերություններով հանդերձ, կյանքի է կոչվել: Կարծում ենք՝ մոդուլային ուսուցումը պետք է ներդնել աստիճանաբար՝ զուգակցելով ուսուցման ավանդական համակարգի հետ: Այն առայժմ պետք է դիտարկել իբրև մանկավարժական առաջադեմ փորձ, խորությամբ ուսումնասիրել դրա գիտական և մեթոդական բոլոր առանձնահատկությունները, չեզոքացնել առկա դժվարությունները, ապա նոր միայն ամբողջությամբ ներդնել կրթական համակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Арстанов М.Ж.** Проблемно-модульное обучение. Вопросы теории и технологии. - Алма-Ата, 1980. -267с.
2. **Беспалько В.П.** Основы теории педагогических систем. – Воронеж, 1997.-204 с.
3. **Юцявичене П.Я.** Основы модульного обучения. – Вильнюс: Минвуз ЛитССР, 1989. -219с.
4. **Owens G.** The Module in «Universities Quarterly» // Universities Quarterly, Higher education and society. -1975. - Vol.25.- №1.
5. **Юцявичене П.Я.** Теория и практика модульного обучения. – Каунас: Швиеса, 1989. -272с.
6. **Коньшева А.В.** Теория и методика организации самостоятельной работы по иностранному языку студентов технических специальностей. -Новополоцкий ПГУ, 2006. -292с.
7. **Третьяков П.И.** Технология модульного обучения в школе. -М.: Новая школа, 1997. -254с.

8. **Муравьева А.А., Кузнецова Ю.Н.** Организация модульного обучения основанного на компетенциях: Пособие для преподавателей. -М.: Альфа, 2005. -96с.
9. **Чошанов М.А.** Гибкая технология проблемно-модульного обучения: Методическое пособие. - М.: Народное образование, 1996. -160с.

Ա.Տ. ՄԱՐՏԻՐՕՍՅԱՆ

МОДУЛЬНОЕ ОБУЧЕНИЕ, ЕГО РОЛЬ И ОСОБЕННОСТИ

Представлена роль модульного обучения как важной составляющей образовательного процесса, показаны его особенности и трудности применения.

Ключевые слова: модульное обучение, традиционная система образования, модульный блок, мини-курсы, микро-курсы, субмодули.

A.T. MARTIROSYAN

MODULAR TRAINING. ITS ROLE AND CHARACTERISTICS

The role of modular training as an important component of the educational process, its features and difficulties of application are presented.

Keywords: modular training, traditional education system, modular block, mini courses, micro courses, submodules.

ՀՏԴ 37.04-053.5

Մ.Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Դիտարկվում են միջին տարիքի դպրոցականների ընդհանուր դիմացկունության մշակման անհրաժեշտության հարցերը: Ֆիզիկական կուլտուրայի 35 ուսուցիչների շրջանում անցկացվել է հարցաթերթիկային հարցում: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսուցիչները առանձնակի ուշադրություն են դարձնում դպրոցականների ընդհանուր դիմացկունության մշակման հարցերին: Դպրոցականներն էլ, իրենց հերթին, դժվարանում են ընտրել սեփական դիմացկունությունն ինքնուրույն մշակելու ֆիզիկական վարժությունների լայն կազմը:

Առանցքային բաներ. միջին տարիքի դպրոցականներ, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, դիմացկունության մշակում, շարժողական ընդունակություն, հարցում:

Ներածություն: Ներկայումս դպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում ավելի են կարևորված սովորողների ֆիզիկական պատրաստվածության բարելավման հարցերը: Դա բացատրվում է նրանով, որ դպրոցում